

ԴԱՊԱՓԱՐԻ ԳԵՐԻՆ

Հարիզ

Նա անցնում էր քաղաքի բազմամարդ փողոցով,
որ անգործ ամբոխի համար զբօսավալը էր...

Նրա քայլուածքը հանդարտ էր, բայց անկանոն, ներ-
փալին: Հագած էր իւր տասնամերայ խունացած, մաշուած
վերարկուն, լայն թևերով, գզգզուած փէշերով, կեղառտ
օձիքով: Հնամաշ, ժապաւէնները դեղնած գլխարկի տա-
կից նրա խորը, մտախոհ, աչքերը ուղղուած էին դէպի
անորոշ տարածութիւն: Նուրջը խօսում էին, ծիծաղում,
աղմկում, ոչինչ չէր լսում: Հրում էր անցորդներին իւր
վտիտ մարմնով, հրում նրանցից և... ոչինչ:

Նա ալդ ամբոխից չէ: Ամփոփուած ինքն իւր մէջ,
նա ճանաչում է միայն իւր հոգու աշխարհը: Քսան տա-
րի է ահա անտանելի մտքերը տանջում են նրան: Նա-
դարձել է նրանց կամազուրկ ստրուկը և չի ընդունում
ոչ մի իշխանութիւն, բացի նրանց երկաթէ ճիրաններից:

Գեռ պատանի հասակին չէր հասել, երբ զգաց, որ
բուն երջանկութիւնը կեանքի մտքի անկախութեան
մէջ է: Ոչ ոսկին, ոչ սէրը, ոչ բարեկամութիւնը, ոչ
դիրքը, ոչ մի բան չի կարող տալ այն բարձր հոգեկան
հաճուքը, որ տալիս է միտքը, երբ այն ստեղծագոր-
ծում է:

Մի անգամ գպրոցական ընկերները հաբցըին կա-
տակով, չէր կամենալ, արդեօք, դառնալ Ալէքսանդր
Մակեդոնացի: Նա ամենալին լրջութեամբ և զգացուած
պատասխանեց.

—Կը կամենալի, բայց ոչ աշխարհը գրաւելու հա-
մար, ալլ մարդկանց հոգին:

Նրան ծաղրում էին: Սակայն եղան եւ ալնպիսի-

ները, որոնք գուշակեցին նրա համար փայլուն ապագայ, հրապուրուելով նրա մի քանի մանկական շարադրութիւններով:

Նա լավշտակուեց և աւելի խորը հաւատաց իւր ներքին ձախին: Այդ ձախնը շշնչում էր.

— Դու, Միսակ Աւալեան, հասարակ մահանացու չես: Դու կոչուած ես քո հայրենակիցների հոգիների վրայ ազդեցու: Դու տաղանդ ես և անզուգական տաղանդ:

Եւ ահա քսան տարի է նա ալդ ձախի գերին է: Զայն չէ, այլ երկնալին մեղեգի, որ օրի վրայ կըտրելով նրան նիւթական աշխարհից, բարձրացրել է դէպի եթերք, դէպի իւր իսկ երևակայութեամբ ստեղծած աշխարհը:

Ինչե՞ր չի կրել յանուն «կոչման»—ի՞նչ դառնութիւններ, հալածանք, զրկանք: Այս, եթէ զըի առնի իւր հոգեկան տուալտանքները, դուրս կըդայ մարտիրոսագրութեան մի ստուար հատոր, որ կարող է սարսափ ազդել ընթերցողների վրայ: Այսպէս էլ ասում էր:

— Իմ կեսանքը,—կրկնում էր մերձաւոր բարեկամ ների մօտ,—մի ողբերգութիւն է անթիւ գործողութիւններով: Տեսարանները միմեանցից սոսկալի են: Մի ժամանակ կը տամ հասարակութեանը նրանց գեղարուեստական նկարագիրը, և կը տեսնեն, ինչ տհուելի տառապանքների է ենթարկուած գաղափարին նուիրուած մարդու հոգին:

Այսօր նրա ճակատն աւելի կնճռոտ է, շրթունք ներն աւելի ամուր սեղմուած: Նրա վտիտ կերպարանքը, կարծես, ինքը թշուառութիւնն է մարմնացած: Անցորդները նրան համարում են բաղդի անուի տակ ջախջախուած մէկը, որ չըկիտէ ուր տանել իւր ողորմելի անձը: Նայում են նրան կամ կարեկցութեամբ կամ արհամարհանքով: Նրան ամեն օր որոշ ժամերին տեսնում են զրօսավայրում, և միշտ մենակ, միշտ խորասուզուած իւր մտքերի մէջ: Կան եւ այնպիսիները, որ նրան համարում են հոգեկան հիւանդ:

Նա ճեղքեց ամբոխը մի ամենախիտ տեղ, ցած եկաւ մալթից: Ինքն էլ չը գիտէր ինչու, կամեցաւ ձիա-

քարշ նստել: Կանդուկտորը մօտեցաւ: Նա մեքենաբար առաւ տուսակը, գրեց գրպանը. մի վայրկեան անդամ չանջատուելով իւր մտքերից:

— Իսկ փողը,—ասաց կանդուկտորը:

Նա մոռացել էր, որ գրպանում երեք օր է մի հատիկ կոպէկ չը կայ: Շփոթուեց, բայց վաղուց եր սովոր ալսալիսի պատահարների: Տոմսակը լետ գարձեց, շտապով ցած եկաւ, ետեւից լսելով կանդուկտորի լիբր ծիծաղը:

Ի՞նչ է պատահել, որ ալսօր այնքան շփոթուած է: Իսկապէս մի շատ սովորական բան: Կինը առաւօտը, ճիշտ այն պահին, երբ նա սկսել էր պարապել, լանդգնեց պահանջել նրանից օրուայ ծախսի համար փող: Ընդամենը մի ռուբլի, նա չը կարողացաւ տալ, որովհետև չունէր:

— Ուրեմն ինչով կերակրեմ երեխաներիդ, — ասաց անողոք կինն այն դարձուածը, որ ամեն օր ասում էր:

— Ալսօր էլ մի կերպ անցկացրու:

— Մինչև երբ...

Եւ նրանք շարունակել էին այս ուղղութեամբ:

— Դու անհոգ ես, ծոլլ, — ասաց կինը:

— Դու անխելք ես, նիւթամոլ, — ասաց մարդը:

Հազար անգամ կրկնուած դարձուածներ, որ վաղուց էին կարցրել իրանց սրութիւնը: Բայց այս անգամ, երբ Միսակ Աւալեանը, կամենալով ազատուել անախորժ տեսարանից, վերցրեց վերարկուն ու գիշարկը դուրս գնալու, կինը դռների միջից շպրտեց մի խօսք, որ մինչև այդ օրը չէր լսուել նրա բերանից.

— Անքանքար...

Այս մի հստիկ բառը Աւալեանի վրայ ունեցաւ գնդակի ազդեցութիւն: Նա կանդ առաւ, գունատուեց, գուցէ վայր ընկնէր, թէ չը լենուէր պատին:

— Ահ, դո՞ւ էլ, անիրաւ, դո՞ւ էլ, — արտասանեց երբ ուշքի եկաւ:

— Այո, մեր թշուառութեան պատճառը քո անքանքար լինելն է:

Աւելի ոչինչ չասաց կինը: Դուներն ուժգին թափով ծածկեց, դուրս եկաւ: Նա զգաց, որ իւր ամուս-

նու հիւանդու ինքնասիրութեանը տուել է բռունցքի
մի այնպիսի հարուած, որպիսին երբէք չէր տուել:

«Անքանքար», հնչում էր Միսակ Աւալեանի ա-
կանջներում սոսկալի բառը, երբ անցնում էր ամբոխի
միջով։ Ահ, ալդ չար ոսոխի դիւալին քրքիջ էր Եւ
այս ասաց նրա մտերիմը, կեանքի լաւիտենական ընկերը,
նա, որ, ընդհակառակը, պիտի լինէր իւր պաշտպանը,
թևեր տուողը».

Անգնաթ կին, վերջապէս, գտար մի բառ, որի մէջ
ամփոփեցիր այն ճշմարտութիւնը, թէ տասներկու տա-
րի է նրան չես ճանաչում, չես գնահատում, չես կա-
րեկցում անգամ։ Ի՞նչ ես պահանջօւմ նրանից։ Կեան-
քի նիւթական ապահովութիւն։ Հազար անգամ ասել է,
թէ չի կարող տալ Զի կարող, որովհետև գաղափարի
մարդ է և ոչ ոսկու գերի։ Նրա ուղին նեղ է, փշոտ։
Նա պէտք է լինի յերկ, սոված, ինչպէս եղել են մարդ-
կութեան բոլոր ուսուցիչները, մտքի բոլոր հերոսները։..

— Անքանքար, — կրկնում էր Աւալեանը մտքում,
այնպիսի շարժումներ անելով, որ անցորդներն ունէին
իրաւունք նրան ցնորուած համարելու, — միթէ ճիշտ է։
Ահ, ոչ։ Նա ուզում էր վիրաւորել ինձ։ Ալդ մի ստոր
փորձ է, դիպչելով իմ ինքնասիրութեանը, ստիպել ինձ
անցնելու ամբոխի հարթած ճանապարհը և դառնալ ողոր-
մելիներից մէկը։ Չես լաջողիլ, տիմար կին, երբէք չես
լաջողիլ...

Նա մեղաւոր չէ, որ հասարակութիւնը տգէտ է,
ազգը գուեհիկ։ Այնքան գուեհիկ, որ իւր ընտրեալ զա-
ւակների մտքի արտադրութիւնները գրախանութներում
փթեցնելը լանցանք չի համարում։ Ահ, ամբոխ, ամ-
բոխ, սոսկալի է քո անտարերերութիւնը։ Բայց չը պիտի
յուսահատուել։ Նրա մտքերն ապագալին են պատկա-
նում։ Նա ժամանակից առաջ է ծնուել — ահա նրա
թշուառութիւնը, նաև բաղդաւորութիւնը...

Երբ Աւալեանը տուն վերադարձաւ, կինը կանգ-
նած էր պատշաճմբի վրայ, ձեռները կրծքին ծալած,
հայեացքն ուղղած դէպի ցած, կեղաստ բագը, ուր խա-
ղում էին նրա զաւակները — մինը վեց եօթ տարեկան
աղջիկ, միւսը չորս-հինգ տարեկան տղայ։ Դա փոքրիկ

հասակով, թրւի դէմքով, նեղ ճակատով, հիւանդոտ աչքերով մի էակ էր — կեանքի մանր մունը հոգսերի կատըրեալ մարմնացում։ Տնալին յարատե աշխատանքն և կարիքը զլկել էր նրան իւր տարիքին յատուկ թարմութիւնից։ Երեսուն տարեկան չը կար, քառասուն տարեկանի տպաւորութիւն էր անում։

Նրա մօտ կանգնած էր եղբալը, մօտ քառասուն տարեկան մի տղամարդ, դէմքի առողջ, եռանդուն և խելացի գծերով։ Կատարեալ այս աշխարհի որդի։

—Ահա եւ ինքը, — ասաց սա, բարեելով Աւալեանին, — ես ձեզ կը հաշտեցնեմ։

Աւալեանը, գլխով պատասխանելով նրա բարեին, բարձրացաւ սանդխտով և անցաւ բնակարան, որ բաղկացած էր երկու փոքրիկ, անշուք և վերին աստիճանի աղքատ կահաւորուած սենեակներից։ Նո վերարկուն անփոյթ շպրտեց աթոռներից մէկի, գլխարկը միւսի վրայ և նստեց իւր գրասեղանի քով։ Զգելով սի մոլոր հայեացք շուրջը, արմունկը լենեց սեղանին, գլուխը դրեց ձեռի ափի մէջ և աչքերը ծածկեց։ Կար ալդ շըշ ջապատող աղքատութեան մէջ մի սուր կշտամբանք, որ մէշտ պղտորում էր նրա հոգին, ինչ տրամադրութեան մէջ ևս լինէր։

Անտանելի զգացմամբ, գրեթէ սարսափով սպասում էր, թէ ահա ներս պիտի մտնի կինը և շարունակի առաւօտեան տեսարանը։

Նա բաց արաւ գրասեղանի արկղը, գուրս բերեց այնտեղից մի հաստլիկ ձեռագիր, սկսեց թերթել։ Այս նրա վերջին աշխատութիւնն էր, դեռ անաւարտ։ Մի գործ, որ իրը թէ պիտի արծարծէր նրա գաղափարներն աւելի հանգամանօրէն, քան երբ և է արծարծուել էին նրանք։ Այսպէս էր նա հաւատացած, ուստի և ոգեսորուած էր։ Նա յոյս ունէր ալդ գործով, վերջապէս, խորապելու իւր և հասարակութեան մէջ կանգնած պատնէշը։ Ախ, ալդ սարսափելի սառցէ պատը։ Քսան տարի է նա ճգնում է հալեցնել այն, չի կարողանում։ Նա դեռ անլայտ է հասարակութեանը, նրա անունը դեռ չի փալլում գրական հորիզոնում։ Անշնորք ները և տկարամիտները բռնել են ասպարէզը, իսկ նա

տակաւին խաւարի մէջ է։ Վիրաւորական, լուսահատիչ դըութիւն։

Նա յետ գրեց ձեռագիրը և վերկացաւ տեղից։

Կինը ներս մտաւ, նրա ետևից եղբալը։ Կանգ առան և նայեցին նրան, քոյլը հեգնական հալեացքով, եղբալը ակնյալա կարեկցութեամբ։

Նրանց տեսնելով, Աւալեանը կատաղեց։

—Ի՞նչ էք ուզում ինձանից, —զոչեց, ոտը զարկելով լատակին, —թողէք ինձ, ես ուզում եմ պարապել, թողէք, անողորմ մարդիկ, դուք միշտ խանգարում էք ինձ։

Նրանք ոչինչ չասացին, որովհետեւ պատրաստուել էին շտար բան ասելու հանդարտ նստեցին իրարու քով, պատի տակ դրած հնամաշ, ներկը կորցրած աթոռների վրայ Աւալեանը զգաց, որ սկսուելու է մի երկար, անխորժ բացադրութիւն։ Հնար ըըկար, պէտք էր փոթորիկն ընդունել։

—Ալսպէս շարունակել չի կարելի, —սկսեց կինը, մի ծանր, երկարատև հառաչտնքից լետոյ, ձեռները կրծքից ցած բերելով և դնելով ծնկների վրայ, —պէտք է վերջ տալ այս անտանելիք կացութեանը։

—Ի՞նչ ես պահանջում ինձանից։

—Մարդավարի ապրուստ։

—Ահ, մարդավարի ապրուստ։ Գիտեմ քո իդէալը. խոհարար, սպասաւոր, թանգագին բնակարան, համագամ կերակուրներ, զարդ ու պչրանք։ Տասներկու տարի ես չը կարողացաւ ազդել քա հալեացների վրայ, կին, այդ ինձ կարող է խելագարութեան հասցնել։

—Լսում ես, Գարեգին, —դարձաւ կինն եղբօրը, —լսում ես, թանկագին բնակարան, սպասաւոր, զարդ ու պչրանք։ Ահա ինչպէս է բացադրում իմ համեստ պահանջները։ Ալսօր ճաշի համար ոչինչ չունինք, երեխաներս շրջում են կիսամերկ, բորլիկ։ Սիրտը մորմօքում է նրանց նայելիս —և ես դեռ պահանջում եմ փարթամ ապրուստ, հա հա հա։

Սուր, անխորժ էին Աւալեանի համար նրա ձայնը և կծու ծիծաղը։

—Արսւսեակ, —արտասանեց նա, աշխատելով զըս-

պել գրգիռը, — բաւական է, մի տանջիր ինձ:

— Դեռ ես եմ քեզ տանջում, ես ծասներկու տարի է իմ կետնքը տանջանքների շղթալ է, դեռ դուք ինձ յանդիմանում: Մտիկ արա ինձ, տես ինչ օրի եմ հասել: Աշխատում եմ օրը մինչև երեկոյ ինչպէս փողոցի մշակ, լոգնում, ուժասպառ լինում այնպէս, որ գիշերները քնել չեմ կարողանում: Խոհանոցի ծուխը և անվերջ արտասուքը կուրացրել են աչքերս: Նայիր ձեռներիս, նրանք փալտացել են շատ աշխատելուց: Նայիր ինձ, ով կարող է ասել, թէ ես դեռ երիտասարդ եմ: Եւ դեռ ես եմ տանջում քեզ: Ոչ, այսպէս ապրել չի կարելի, ես լոգնել եմ, այլ ես ովք չունիմ:

— Վերջը, վերջը, — պոռաց Աւալեանը, — այդ բոլորը հազար անշամ կրկնուած է, անձրալի: Նոր ինչ ես ուզում:

— Պահանջում եմ քո զաւակների անունով, որ թողնես ցնորդներդ, ուշքի գաս և գործով պարապես:

— Հնորդներ: Ողորմելի կին, զու ամբողջ հոգով բևեռուած ես ողորմելի երկրին: Դու գործ չես համարում գրականութիւնը, զու արհամարհում ես իմ կոչումը, այն աստուածակին կրակը, որ ալրում է հոգիս:

— Ահ, թող, Աստուած սիրես, այդ սովորական դարձուածները, որոնք վազուց են ձանձրացրել ինձ: Դու հասկանում ես, ինչ եմ ուզում ասել: Երեակացիր քո մասին ինչ ուզում ես, բայց մի մոռանար, որ ընտանիքիդ հոգսը քո առաջին սուրբ պարտականութիւնն է:

— Ո՛չ, երբէք: Իմ առաջին սուրբ պարտականութիւնն է իմ կոչման ծառայելլը: Ալո, ալո, զու խուլ ես, բայց ես մեշտ պիտի կրկնես — մի հոգի, որ ծնուել է անկախ, անկախ էլ պիտի հանգչի: Ես չեմ կարող ենթարկուել առօրեալ կեանքի մանր-մունը պահանջներին: Ինձ համար նրանք գոյութիւն չունին: Ես եղել եմ ուսուցիչ, ծառայող, և միշտ զգացել եմ, որ դաւաճանում եմ իմ կոչմանը, ոտնատակ եմ տնում իմ սրբութիւնը: Երբ հեռանում եմ իմ գրասեղանից, տանջուում եմ, հասկացիր և մի պահանջիր ինձանից անհնարինը: Գործ: Կարծես, կալ աւելի ազնիւ, աւելի բարձր գործ, քան իմը: Ախ, ան-

միտ կին, հպատակուիր ճակատագրիդ և օգնիր ինձ
քաջութեամբ կրելու իմ ծանր խաչը Դու ես դժբախտ:
Ահ, անիսելք, եթէ կարողանալիք մի քիչ բարձր մտածել,
կըզգայիր, որ քո բոլոր ընկերուհիների, ծանօթների,
քո ամբողջ շրջանում դու ես երջանիկը, քանի որ իմ
կինն ես:

Մի ուրիշ, աւելի գառն, աւելի կծու ծիծաղ եղաւ
հետզետէ ոգևորուող գաղափարականի պատասխանը:

—Մի ծիծաղիր, իմար, —գոչեց Աւալեանը, կատա-
ղութիւնից ճանկելով իւր գլխի մազերը, — այսօր դու
ինձ վէրքեր ես տալիս, որոնց բժշկել երբէք չես կա-
րող: Քո ծիծաղը մի ապտակ է ինձ համար: Դու բարուա-
կանութեան դէմ ես լանցանք գործում, ողորմելի թզուկ:

—Ախար ինչով, ինչով: Որ ես քո զաւակների հա-
մար մի կտոր հաց եմ պահանջում քեզանից:

—Ես նրանց համար պատրաստում եմ մի ալնպի-
սի գանձ, որի մասին դու գաղափար անդամ չես կարող
ունենալ: Մի խանգարիր ինձ, երկրին կպած հոգի, մի
խանգարիր: Ես գիտեմ որտեղից են գալիս այդ հովերը:
Դու քո խելքով չես գործում: Քեզ սովորցնում են,
գրգռում են իմ դէմ:

Ակնարկը վերաբերում էր տիկնոջ եղբօրը, որ տա-
կաւին չէր խառնուել վիճաբանութեանը և ոչ մի բառ
անդամ արտասանել: Նա ձգեց հիւրի վրալ մի արհա-
մարհական հայեացք և երեսը դարձրեց:

—Ես շատ զղջում եմ, —ասաց հիւրը, —որ այսօր
եկալ այստեղ: Բայց այդ տեսարանն ինձ համար ոչ նոր
է, ոչ զարմանալի: Թոյլ կը տան ինձ մի քանի խօսք
ասել, Միսակ:

—Ահ, գիտեմ ինչ պիտի ասես: Քոյր ու եղբալը
դուք միևնոյն ասափակ հայեացքների տէրն էք:

—Թող այդպէս լինի, բայց ես, ալնուամենալիւ,
այսօր կասեմ այն, ինչ-որ վաղուց էի ուզում ասել և
չէի համարձակւում: Բանն այն է, սիրելիս, որ դու մի
սարսափելի մոլորութեան մէջ ես: Եւ դրանից առաջա-
նում է քո ընտանիքի և քո իսկ դժբաղդութիւնը: Խօսքս
քո կոչման մասին է, որ ալնքան լափշտակել է քեզ:
Ասիր, սիրելիս, դու... դու չունիս այն, ինչ-որ երևակա-

լում ես թէ ունիս: Պէտք էր, վերջապէս, մի օր ասել
քեզ այս ճշմարտութիւնն և առհա ասում եմ: Դու խո-
րին ինքնախաբէութեան մէջ ես, սիրելիս:

— Իմ ձիրքի վերաբերմամբ:

— Այո, այո, — գոչեց հիւրը եռանդով, — քո ձիրքի,
քո, այսպէս ասած, ստեղծագործական շնորքի վերաբեր-
մամբ: Լսիր, դու արդէն հասել ես ծերութեան առա-
ջին շրջանին: Քառասուն տարին այնպիսի հասակ է,
երբ տղամարդը կարող է սառնարիւն լսել ճշմարտու-
թիւնն իւր մասին: Ասում եմ քեզ իրը ընթերցող,
իրը հասարակութեան անդամ, դու շնորհք չունիս:
Քսան տարի է դու միմիայն անաջողութիւնների ես հան-
դիպում, պէտք է զգալիր այդ:

— Յետով, յետով, — արտասանեց Աւալեանը, զգալով,
որ արիւնն սկսում է գլխովը տալ:

— Յետով այն, սիրելիս, որ դու, լինելով մի հասարակ
արհեստաւոր, այն էլ ոչ շատ ընդունակ, երևակալում
ես քեզ արտիստ: Պարզ և անկեղծ ասում եմ. քո գըի-
շը ոչ մի ազդեցութիւն չունի քո փոքրաթիւ ընթեր-
ցողների վրայ: Ես աւելին կասեմ, քեզ ծաղրում են
բոլորը, որոնք ծանօթ են քո գրուածներին: Ծաղրում
են քո յաւակնութիւնը և ինքնախաբէութիւնը: Զուը
ես կատաղում և գունատում: Դու քեզ համարում ես
ճշմարտութեան հերոս, ունեցիր համբերութիւն քո մա-
սին էլ ճշմարտութիւն լսելու: Սիրելիս, դու լափշտա-
կուած ես ինքդ քեզնով, բայց չը կալ մէկը, որ լա-
փշտակուած լինի քո գըչով:

— Փաստե՛ր, փաստե՛ր, առանց փաստերի քո ասա-
ծը զբարտութիւն է:

— Քանի՞սն ես կամենում: Զէ որ ես պտտում
եմ քո ընկերների շրջանում, գիտեմ ինչ են խօսում: Ա-
հա, օրինակ, հէնց այսօր, ալստեղ գալուց քիչ առաջ
քո լաւ ընկերներից մէկի մօտ էի: Նա նոր կարդացել
էր քո վերջին շարադրութիւնը, որ դեռ դրած էր նրա
սեղանի վրայ: Նա հազորդեց ինձ իւր տպաւորութիւնը:
Ի՞նչ տպաւորութիւն: Նա ուղղակի ծաղրեց քո գերքը:
Ահա նրա խօսքերը բառ առ բառ. «Ես շատ քիչ եմ
հանդիպել հեղինակի այսպիսի ողորմելի շանքերի մի նոր

բան ասելու և անաջող։ Ամբողջ գերքը միայն զըռդի յաւակնութիւնն է ցոյց տալիս»։

— Այդ ասողն անկառակած իմ հակոռագներից է։

— Ըսդհակառակը, նա քո անկեղծ բարեկամներից է։ Մի անձ, որ կըկամենար քեզ ազատել ինքնախարէութիւնից։ Նա գրականութիւն սիրող է, բայց ոչ գրող, հետևաբար չես կարող ասել, թէ նրա մէջ նախանձն է խօսում։ Բայց ինչ է նա, միթէ նա է մենակ։ Բոլորը, բոլորը, որոնք քեզ ճանաչում են - խղճում են, հաւատա ինձ։ Ես հետեւ եմ քո գործունէութեանը ամենայն բարեխղճութեամբ և, բացի գաղտնի և ակնյալու արհամարհանքից ոչինչ չեմ տեսել։ Քո ոչ մի գործը ոչ . միայն ջերմ, այլ և հասարակ վիճաբանութեան կամ բանակութիւն չի արժանացել։ Նատ շատ քո մասին երբեմն գրել են մի քանի սառն տողեր, որոնք աւելի ներողամտութիւն են արտալալտել քան մի ուրիշ բան։ Մի արժանաւորութիւն քո մէջ, որ ամենքին իրաւ զարմացնում է, այդ քո եռանդն է և տնիսախտելի հաւատը դէսի քո կոշումը։ Մի ուրիշը քո տեղ վաղուց յուսահատուած կըլինէր և զըլիչը կոտրած։ Իսկ դու, շարունակ անաջողութիւններ կրելով, կարծես, քանի գնում աւելի ու աւելի ես ոգեսորւում քո կոչումով, ներիր ասել, երեւակայական կոչումով։

— Որովհետեւ ես ամբոխի համար չեմ գրում, որովհետեւ իմ գործերը չեն կարող դիւր գալ գաճաճներին։ Որովհետեւ նրանց գաղափարները անմատչելի են ամբոխին։ Որովհետեւ արհամարհում եմ եւ հասարակութեան, եւ մամուլի և բոլոր ալն պարունների կարծիքը, որոնց հետ դու շփում ես։

— Երկինքը վկայ, այդ խօսքերը ծիծաղելի են քո բերանում, — գոչեց հիւրը անկեղծ կարեկցութեամբ։ Արհամարհում ես հասարակական կարծիքը։ Կարելի է, միթէ, արհամարհել մի բան, որ գոյութիւն չունի։ Ես քեզ ասում եմ, որ քո մասին տիրում է կարծիքի գրեթէ կտտարեալ բացակայութիւն։ Հասկացիր, վերջապէս, ալս բանը, խեղճ մարդ, եւ մի կրկնիր հանճարների բերանից առած խօսքերը։ Անմատչելի գաղափարներ։ Այդպիսի բան չը կայ քո գրուածներում, մարդ, զգա-

վերջապէս: Ընդհակառակը. քո գրուածների մէջ հէնց ամենից առաջ քո մտքերի հսութիւնն է աչքի ընկնում: Այո, ալո, սիրելիս, բոլորը, ինչ որ դու համարում ես նոր, ինքնուրոյն, հին է, հազար անգամ կրկնուած, ծամծմած: Նոյն իսկ քո ասելու ձևը չունի որ և ինքնուրոյնութիւն, բարեկամ, ձեւ:

Վերջացնելով խօսքը, հիւրը վերկացաւ տեղից և սկսեց անցուդարձ անել փոքրիկ սենեակում:

Աւալեանը կանգնած էր մի անկիւնում, կատաղութիւնից շրժունքները կրծոտելով: Նրան թւում էր, որ խօսողն իւր ոխերիմ թշնամին է, եկել է նրա աչքի առջև ունաստակ անելու նրա սրբութիւնը:

— Ես ծիծաղում եմ քեզ վրայ, ես խղճում եմ քեզ, — կարողացաւ միայն արտասանել նա:

— Կեղծում ես, բարեկամ: Դու չես ծիծաղում, այլ կատաղում ես, և հենց այդ ապացոյց է իմ խօսքերի ճշմարտութեան: Դիտեմ, որ ես կոպիտ եմ վարւում, դիպչելով քո հոգու հիւնդոտ տեղին: Բայց ճշմարտութիւնն ամենից առաջ: Այս, ինքնախաբէութեան զոհ, ուշքի եկ, վերջապէս, խեղճ է քո ընտանիքը, դու: Մի տանջիր ուրիշներին և քեզ: Դիտեմ, որ դժուար է և դառն հիասթափուելը, բայց պէտք է քեզ հիասթափեցնել: Դու հիպնօզի ես ենթարկուած, մի անգամ արդէն ինքդ քեզ ներշնչել ես մի սխալ գաղափար և տարիների ընթացքում դարձել նրա ստրուկը:

— Ոգեսորութիւնը խարուել չը գիտէ, — գոչեց Աւալեանը համոզմունքով, — ես ոգեսորուած եմ, կընշանակէ խարուած չեմ: Ինչո՞ւ ես ունիմ այդ գաղափարը և ոչ դու, մի ուրիշը, քեզ նման հազարաւորները: Ոչ ոչ, զուր են քո դիւալին փորձերը, ես հաւատում եմ իմ ոլժին, կը նշանակէ ոլժ եմ:

Մի դառն ժպիտ, որ արտայալտում էր անկեղծ կարեկցութիւն, աղաւալեց հիւրի խելացի դեմքը: Նա մօտեցաւ երկու փոքրիկ լուսամուտներից մէկին, բաց արաւ ալն և ասաց.

— Տեսնո՞ւմ ես գետի ափում, ծառերի խտութեան մէջ ալն մեծ տունը գեղին պատերով: Գնանք մի օր

այնտեղ և ես ցոյց կը տամ քեզ հարիւրաւոր մարդիկ, որոնք նոյնպէս լափշտակուած են իրանց կոչումով։ Նը-
րանք ևս գաղափարի գերիներ են։ Մէկն իրան երևա-
կալում է անլաղթելի զօրապետ, միւսը հանճարեղ գիտ-
նական, երրորդը երևելի հոետոր։ Իւրաքանչիւրը լա-
փշտակուած է իւր իդէալով։ Փորձիր նրանց հասկաց-
նել իրանց սխալը, քեզ կըհամարեն խելագար։ Բայց
չես խղճալ, արդեօք, նրանց։

— Ի՞նչ, — պոռաց Աւալեանը, այլ ևս չը կարողա-
նալով զսպել իւր կատաղութիւնը, — դու ինձ համարում
ես խելագար։ Զգուշացիր, ժխորի զաւակ, ես արդէն
կատաղում եմ։

— Եհ, թող, իսէր Աստծու, այդ ձեւերը։ Դու
կին չես կամ երեխալ, որ քեզ հետ սեղրալի բերանով
խօսեմ։ Թող իմ անվայել համեմատութիւնը վիրաւորի
քեզ, բայց ստիպուած եմ, սթափեցնելու համար, մի-
ջոցների մէջ խտրութիւն չը դնելի Իրեւ ազգական,
խղճում եմ քեզ, մարդ, դէն ձգիր աչքերիցդ քօղը և
հաշտուիր այն մտքի հետ, որ դու տաղանդ չես, այլ
ինքնախարէկութեան զոհ։ Ալդ աւելի լաւ կըլինի, հա-
ւատակ ինձ։ Ի՞նչ իրաւունքով ես տանջում ուրիշնե-
րին։ Ահա այս խեղճ կնոջը, որ ամեն օր այսպէս լա-
լիս է, ահա այն անմեղ երեխաներին, որ խաղում են
կեղտոտ բակում շների ու կատուների հետ, աւելի լաւ
շրջան չունենալով։ Նայիր, տես ինչի են նման։ Գոնէ
իմ սիրտն է մորմօքում նրանց տեսնելիս։ Կարծես, փո-
ղոցի մուրացկաններ լինին, նրանց գզզզուած բաճկոն-
ները, պատուած կօշիկները, որոնց միջից երեսում
են նիհար սրունդները, մի մի բողոք են քո լանցաւոր
անհոգութեան դէմ։ Այս ինչ, դու բարի հայր ես և
շատ բարի, Մտածիր, արդեօք, քո անփութութիւնը
հաւասամը չէ անբարոյականութեան։ Արդեօք, դու բա-
րոյական մի պարագիտ չես, կպած հասարակութեան
մարմնին։ Ես շատ անգամ եմ քեզանից լսել բողոք հա-
սարակութեան դէմ, շատ անգամ ես դու նրա հասցէին
շանթարձակ յօդուածներ տապել։ Ասա խնդրեմ, ինչո՞ւ,
ի՞նչ իրաւունքով։ Ո՞վ է քեզանից զոհաբերութիւն ոլա-
հանջում կամ ով է կարօտ քո ոգևորութեանը։ Ինչո՞ւ

ես զօրով չը գնահատուած աստուածալին մարգարէ ձևանում։ Ումին են մազի չափ օգուտ տուել քո տափակ ձեռով արտալայտսն տափակ մտքերը, խօմ չե կարելի ուժով հաստատել, թէ դու կարևոր ես ազգի համար։ Զէ որ, բացի քեզանից, պէտք է մի ուրիշն էլ զգալ քո կարևորութիւնը։ Ո՞վ է զգում։ Յո՛լց տուր գոնէ սէկին, Միթէ բոլորն էլ լիմար են, թշնամի, նախանձոտ, տգէտ։ Այս, խօսք չունիմ, կան մեր մէջ չը վարձատրուած տաղանդներ, գիտեմ։ Բայց, երդում եմ, որ դու նրանց շարքին չես պատկանում։ Հաւատա, ամենից աւելի հէնց նրանց աչքումն ես ծաղրելի, ամենից առաջ հէնց նրանք են քեզ արհամարհում։

Նա լուսամուտը փակեց և դարձեալ նստեց։

Քանի մի վալրկեան տիրեց լուռթիւն։ Աւալեանն անցել էր սենեակի անկիւնը և, մէջքը պատին տուած, լսում էր։ Կինը նալում էր նրան և սրտի խորքից կարեկցում։ Զգում էր, որ իւր եղբօր խօսքերը վիրաւորում են ամուսնուն, վշտացնում, գրգուում, բայց միանգամած համաձայն էր նրա հետ։

—Ես հասկանում եմ ձեզ, —արտասանեց Աւալեանը լուզմունքից երերուող ձախով։ —Ձեր նպատակն է դարձնել ինձ հասարակ մշակ, առօրեալ նիւթական հոգսերի ստրուկ։ Որպէս զի հարստահարէք ինձ։ Բայց այդ ձեզ չի լաջողուիլ, երբէք չի լաջողուիլ։ Թող ես լինիմ խելագար ձեր աչքում, այդ ինձ հասար մինչև անգամ գովեստ է, բայց ձեր ճանապարհն ինձ համար զգուելի է։ Այս, դուք ողորմելի խլուրչներ էք իմ աչքում։ Դուք ճանճեր էք զիշի վրալ նստած, որոնք արծուի թռիչքի մասին երբէք չեն կարող գաղափար ունենալ։ Հաց, հաց, ահա ձեր կեանքի ան և ֆէն։

—Ցետո՞յ, լետո՞յ, —կրկնեց հիւրը սառն հեգնութեամբ, —էլ ուրիշ ասելիք չունիս։ Բայց այդ բոլորը միմիալն ֆռազներ են, հաւատացնում եմ, դատարկ, անմիտ ֆռազներ, որ դարձեալ քո ապիկարութիւնն են ցոյց տալիս։

—Ես դժբաղդ եմ, որ սրտ նման կին ունիմ և քեզ նման ազգական։

—Միթէ դժբաղդութիւնդ այդ է։ Այս, այս, լի-

զում եմ, դու, կարծեմ, այդ մասին գրել ես մինչեւ անգամ, Դու արտայալտել ես այն էժանագին գաղափարը, թէ ընտանեկան կեանքի հիմքը պէտք է լինի ամուսինների բարոյական համերաշխութիւնը: Դու հրապարակօրէն վիրաւորել ես իմ քրոջը, ներկայացնելով նրան քո անմատչելի գաղափարները չը հասկացող, քեզ չը գնահատող միտքէտ էակ: Ահ, չըգնահատուած հանճար, այդ գրուածքը քո անքանքառութեան ամենափալուն ապացոյն է, որովհետեւ այնտեղ ես դու կտպկութիւն ես արել, հետևելով չը գնահատուած տաղանդների օրինակին: Չեմ վիճում, քոլրս շատ էլ մեծ զարգացում չունի, բայց ունի բանականութիւն, ճաշտկ: Նա ընդունակ է գոնէ շնորհալին անշնորհքից զանագանելու: Հաւտտա, եթէ դու ձիրք ունենայիք, վաղոց կը գրաւէիր նրան: Վերջապէս, ես ինքս կըստիպէի նրան կրել բոլոր զըրկանքները համբերութեամբ յանուն քո սուրբ կոչման: Բայց դու չունիս կոչում, բարեկամ, չունիս, ինչո՞ւ ես անլաջողութեանդ պատճառները մերձաւորիդ վրայ գըցում: Տաղանդ... տաղանդն այնպիսի ոլժ է, որի ասջեւ ամեն մի խոչնդոտ տկար է: Նրա տարերային ընթացքի առջև խորտակւում է ամեն մի անհասկացողութիւն, ամեն մի թշնամութիւն, նախանձ, ատելութիւն: Քսան տարի է դու կուռում ես, ասա ինձ, յաղթել ես որևէ է մէկին: Ունի՞ս դու գէթ մի հատիկ երկրպագու: Խօմ չի կարելի շարունակ խօսքերով կերակրուել և գանդատներով թմրել: Մի բան ևս: - Ասում ես, թէ քո մէջ ոլժ ես զգում: Ներիր, ես կասկածում եմ այդ մասին: Ինձ թւում է, որ դու շես զգում ալդպիսի ոլժ, այլ կարծում ես, թէ զգում ես, կամ, աւելի ճիշտն ասած, ցանկալի է քեզ համար զգալ: Հարցրու հոգուդ խորքից, և կը տեսնես, որ երբէք անկեղծ չես հաւատացել քո կոչմանը: Արուեստական կերպով ստեղծել ես իլլիւզիա, և քեզ համար հաճելի է ասլրել այդ իլլիւզիալով: Արթնացիր մի բոպէ, թող երևակալութիւնդ, քննաղատիր ինքդ քեզ և, հաւատացած եմ, ամենախիստ դատավճիռը քո մասին ինքդ կը տաս: Աա, ճշմարիտ չէ իմ ասածը, դու դէմ ես: Խօսիր, հերքիր, եթէ կարող ես, միայն անկեղծ, հասկանսում ես, անկեղծ, սրտիդ խոր-

քից և ոչ հանճարների բերանից գողացած խօսքերով։ Ալ, հենց ալժմ, կարող եմ երդուել, որ դու նման ես այն հիւանդին, որ համոզուած է, թէ շուտով մեռնելու է և գարձեալ ուզում է հաւատալ, թէ պիտի առողջանայ։ Որովհետեւ դիւրին է լուսալ, քան լուսահատուիլ։

—Բաւական է, բաւական է, —գոռաց Աւալեանը գրեթէ շնչահատուած, —ես քեզ արգելում եմ խօսել։ Դուրս արստեղից, սատանայ, դու թունաւորում ես իմ հոգին Ես չեմ ուզում քեզ լսել, չեմ կարող, դուրս։

Բայց արդէն ուշ էր։ Հիւրի անողորմ խօսքերի մէջ զդացել էր դառն ճշմարտութիւնը։ Երբէք նա այնպէս տանջուած չէր։ Ալ, այդ կոպիտ մարդու անողորմ խօսքերով խօսում է ինքը հասարակութիւնը։ Ալո, այո, նա չը գնահատուած, չը հասկացուած տաղանդ չէ, այլ արհամարհուած անշնորքութիւն։ Ճիշտ է, որ նա այդ բանը զգում է վաղուց։ Քանի քանի անգամ բանականութիւնը շշնչել է նրան։ «Աւալեան, դու ստեղծագործ չես, Աւալեան, դու սխալ ճանապարհի վրայ ես։» Բայց հաւատալն ու լուսալն աւելի հաճելի է եղել, քան լուսախաթ լինելը։ Ալո, նա արուեստաբար զարգացրել է իւր մէջ ֆանատիկոսի հաւատ դէպի իւր չունեցած գանձը և հետզհետէ ստրկացել է այդ հաւատին։ Կան ստախօսներ, որոնք մի յալտնի սուտ յաճախ կրկնելով, իվերջոյ իրանք էլ են հաւատում նրան։ Նա քաջութիւն չի ունեցել իւր մալորութիւնը խօստովանելու։ Նա կեղծիքը գերադասել է հօգու յատակից ձայնող ճշմարտութիւնից։ Որովհետեւ կեղծիքը դիւրեկան է եղել, իսկ ճշմարտութիւնը դաժան, սուր, կծու։

Նա նայեց կնոջը և նրա դէմքի վրայ կարդաց վիրաւորիչ կարեկցութիւն։ Նայեց հիւրին—նոյն արտայալտութիւնը։ Ինչպէս դատապարտուած, նա պատրաստ էր յարձակուել անողոք դատաւորների վրայ և խեղգել նրանց։ Որքան ատելի են նրանք իրանց ճշմարտութեամբ։

Նա թուլացած նստեց աթոռի վրայ և գլուխը դըք գրասեղանի ծալըին։ Քսան տարի նա աշխատել է

ալդ սեղանի քով մոլեռանդ տոկունութեամբ, կամաց կամաց բարձրացնելով իւր համար մի երևակայական պատռանդան: Եւ ինչ է շահել ալսօր: Ոչինչ:— Այս, ինչոր կարող է շահել սխալ, հիւանդոտ երևակայութիւնը: Նրա սիրտը մորմոքում էր, հոգին տակն ու վրայ էր եղել: Ինչ-որ բարձրացաւ ներսից և սկսեց խեղդել նըրա կոկորդը: Նա զգաց բուռն, բարձրածայն լացի պահանջ: Բայց կեղծ ինքնասիրութիւնը, որ այնքան ստրկացրել էր նրան, այս անգամ ևս օգնութեան հոսաւ: Նա կարողացաւ զսպել իրան և կատաղութիւնից սկսեց թագուն կրծոտել իւր ձեռները:

Հիւրը նրա նիհար թիկունքներից ցնցումներից ըդգաց նրա անտանելի տանջանքը: Մի վալրկեան զղջաց, որ այնքան խիստ վարուեց: Բայց նայեց շուրջը, ուր տիրում էր լուսահատական աղքատութիւնը, նայեց քրոջը, որ նորից սկսել էր լացլնել: Եւ ասաց իրան, թէ պարտաւոր էր ալդպէս վարուել և ոչ մի միիթարական խօսք, ոչ մի խրախուսանք... Մինչև երբ թողնել նըրան մոլորութեան մէջ,

Դուները բացուեցին աղմուկով և ներս վազեցին Աւալեանի զաւակները—երկու կիսամերկ էակներ, պըղնձագոյն, ինչպէս թափառաշրջիկ գնջուներ: Աղքատութիւնը, կարծես, ծծել էր նրանց կեանքի հիւթը գեռափափիթ: Հասակում: Նրանց նիհար, հիւանդոտ դէմքերի վրայ չը կար մանկական աշխուժութիւն: Նրանց աչքերի մէջ նշմարւում էր վաղաժամ թախիծ:

Կանգ առան սենեակի մէջտեղում և նայեցին ծընողներին: Հասկացան, որ նրանք դարձեալ ընդհարուել են, և դարձեալ միմեանց վիրաւորել: Սովորական տեսարան, որ գրեթէ ամեն օր կրկնուելով, մանուկ աչքերի համար դարձել էր անհրաժեշտութիւն: Զաւակների ընազդալին համակրանքը աւելի մօր կողմն էր քան հօր կողմը, որովհետև նա էր միշտ լաց լինում և տանջում նրանց աչքի առջև:

— Ինչո՞ւ եկաք, — ասաց քեւին, — գնացէք, խաղարէք դըսում: Գնացէք:

Եւ, բռնելով նրանց թևեց, դուրս տարաւ և դըսները ծածկեց:

—Աստուած իմ, —արտասանեց մայրը, աչքերը սրբելով, —ես նրանց համար դեռ ճաշի հոգս չեմ արել:

Նալեց եղբօրը մի հայեացքով, որ արտայալտում էր եւ աղերս, եւ ամօթ: Եղբայրը հանեց գրպանից միքանի ոռւբլի և գաղտուկ տուեց նրան:

—Մինչև երբ, —արտասանեց քոյրը, խորը հառաշելով:

Ոլդ պահին Աւալեանը գլուխը բարձրացրեց: Ոտքի թռաւ, գոռալով.

—Մուրացկան. ես թոյլ չեմ տալ, երբէք, յետ տուր ալդ փողերը: Ի՞նչպէս համարձակուեցիր վերցնել: Ես մուրացկան չեմ:

—Ինչե՞ր ես խօսում, Միսակ, մի՛թէ ես օտար եմ:

—Ոլդ միւնոյնն է. չեմ ուզում: Ես ինքս կը գտնեմ փող: Յետ վերցրու: Դրաւ կըդնեմ ինձ և չեմ թողնիլ, որ երեխաներս մուրացկանութեամբ ապրին: Շատ էլ ողորմելի մի համարէք ինձ: Ես ձեզ արգելում եմ խոճալ ինձ: Կը գնամ, իսկոյն փող կըբերեմ: Իսկ յետոյ կը տեսնենք ով է մեզանից աւելի զօլեղը: Ես թէ դու, ես թէ դու...

Նա վերցրեց գլխարկն ու վերարկուն և դուրս վագեց խելագարի պէս:

Քոյրը տարակուսանքով նալեց եղբօրը:

—Մի վախենար, —ասաց եղբայրը, —ալդ լաւ նշան է: Նա բժշկում է:

—Տալ Աստուած:

Մի ամբողջ շաբաթ Աւալեանն անճանաչելի էր: Նրան պաշարել էր ինչոր անսովոր եռանդ: Թուրս էր գալիս տնից առաւօտները կանուխ և վերադառնում էր ճաշին: Դրասեղանին չէր մօտենում, չէր գրում և ոչ էլ կարդում էր: Կնոջ և երեխաների վրայ չէր գոռում, թէ նրանք խանգարում են իրան պարապելու: Բայց լուռ էր և տխուր:

Մի օր նա, տուն վերադառնալով, ասաց.

—Կարող ես ալժմ հանգստանալ, ես գործով եմ պարապում: Ինձ տուել են երկու մասնաւոր դասեր:

—Ահ, փառք Աստծու, —չը կարողացաւ թագցնել իւր ուրախութիւնը կինը, —ալժմ մենք կապրենք քիչ-շատ մարդավարի:

ԼՈՒՄԱՑ

Արդարեւ, նրանք մի քանի ամիս հաշտ էին: Կարելի էր կարծել, որ խռովութիւններն առ միշտ փախել են այդ ընտանիքից, ուր բուն էին դրել տասներկու տարի: Ոչ մարգն էր բորբոքում ու գոռում, ոչ կինն էր քանգատուում ու լալիս: Նուտով երեխաների վրայ երևացին նոր հագուստներ:

Բայց Միսակը շարունակ լուռ էր, կնոջ ոչ մի խօսքին չէր պատասխանում, երեխաներին չէր փաղքում:

Մի անգամ նա տուն վերադարձաւ սաստիկ գըրգոռած և ասաց.

—Ես զասերս թողեցի:

—Ինչո՞ւ, հարցրեց կինը գրեթէ սարսափով:

—Հէնց այնպէս, չեմ ուզում պարապել: Չեմ կարող: Ես տանջւում եմ:

Նա մօտեցաւ գրասեղանին և դուրս բերեց այնտեղից իւր անաւարտ ձեռագիրը:

—Տեսնո՞ւմ ես, —գոչեց, ձեռը զարկելով ձեռատեսրին, —ես չեմ կարող ամենասիրելի զաւակս թաղել գերեզմանում, չեմ կարող: Ես սիրում եմ խելագարի պէս իմ գրիչը: Թող քո եղբայրը շը պարձենայ, թէ ինձ ուղիղ ճանապարհի վրայ գրեց: Ինձ ուղելի չի կարելի, ուշ է: Ահա նա, գալիս է իմ կարծեցեալ ուսուցիչը: Տես, ինչ ինքնագոհութիւն է արտայալտում նրա դէմքը: Երեսակայում է, որ ինձ փրկեց կորստից: Ոչ, ոչ, երկրին մեխուած հոգի, գուշես կարող ինձ քեզ ընկերացնել, քո հաւասարը դարձնել: Ի՞ աշխարհը այլ է, քեզ համար անհատչելի: Հեռացիր ալստեղից, մի խանգարիք այլ ևս:

Հիւրը բենեպուեց դրան շէմքի վրայ:

—Թողէք ինձ, ահա իմ տեղը, —շարունակեց Աւալեանը, ձեռն ուժգին գրասեղանին զարկելով, —ալտաեղ եմ սկսել ապրել, ալստեղ էլ սկսի մեռնեմ: Ես չեմ կարող օրուայ հացի ստրուկը դառնալ... հասկանո՞ւմ էք, չեմ կարող: Ես տանջուեցի այս մի քանի ամիսները: Այսօր հրաժարուեցի դասերիցս և ալժմ դարձեալ նոյն Աւալեանն եմ: Ես գաղափարի գերի եմ:

Հիւրը նայեց նրան խորին կարեկցութեամբ և արտասանեց.

—Այս, գու գաղափարի գերի ես, միայն ոչ քո կարծած գաղափարի... ԵՐՎԱՆՁԱԴՐԵ